ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

ք. Երևան «24» Հոկտեմբեր 2021թ № 222-Ա

«ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԱՆՎԱՏՆԳՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ» ՍՊԸ ՓՈՐՁԱՐԿՄԱՆ ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ (ՀՀ) ԵՎ ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ (ԵԱՏՄ) ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԵՐՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ (ՕԲՅԵԿՏԻ) ԵՎ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՄԱՐՄԻՆ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեխնիկական կանոնակարգման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետը, 20-րդ հոդվածի 2-րդ մասով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2013 թվականի հունիսի 13-ի N 623-Ն որոշման 1-ին կետով հաստատված հավելվածի 24-րդ կետով և Հայաստանի Հանրապետության վարչապետի 2019 թվականի հունիսի 1-ի N 658-Լ որոշման հավելվածի 18-րդ կետի 21-րդ ենթակետով, հիմք ընդունելով համապատասխանության գնահատման մարմնի նշանակման համար ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրության, նշանակման ոլորտի սահմանման, ինչպես նաև նշանակման կասեցման կամ չեղյալ հայտարարման համար ստեղծված աշխատանքային խմբերի ս. թ. մարտի 19-ին կայացած աշխատանքային հանդիպման արձանագրությունը.

հրամայում եմ.

1. «Տեխնիկական անվտանգության ազգային ինստիտուտ» ՍՊԸ-ի փորձարկման լաբորատորիային նշանակել սույն հրամանի հավելվածում նշված Հայաստանի Հանրապետության (ՀՀ) և Եվրասիական տնտեսական միության (ԵԱՏՄ) տեխնիկական

կանոնակարգերով սահմանված արտադրանքի (օբյեկտի) և ցուցանիշների համապատասխանության գնահատման գործունեություն իրականացնող մարմին՝ համաձայն հավատարմագրման վկայագրի (հավատարմագրման գրանցահամար՝ N 058/T-091) N 1/1-B հավելվածներում ամրագրված հավատարմագրման ոլորտում ընդգրկված արտաքին տնտեսական գործունեության միասնական ապրանքային անվանացանկի ծածկագրերի, ցուցանիշների և համապատասխան տեխնիկական կանոնակարգով սահմանված փորձարկման (այդ թվում՝ նմուշառման) մեթոդը սահմանող փաստաթղթերի նշագրերի:

2. «Տեխնիկական անվտանգության ազգային ինստիտուտ» ՍՊԸ-ի փորձարկման լաբորատորիայի համապատասխանության գնահատման մարմին նշանակել մինչև 2023 թվականի նոյեմբերի 3-ը, տրամադրել նշանակման վկայական՝ Ն-35 և շնորհել նույնականացնող համար՝ Ն-35 (Н-35) 2021:

3. «Տեխնիկական անվտանգության ազգային ինստիտուտ» ՍՊԸ-ի փորձարկման լաբորատորիային գրանցել Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարի 2013 թվականի սեպտեմբերի 3-ի N 801-Ա հրամանով հաստատված համապատասխանության գնահատման նշանակված մարմինների գրանցամատյանում:

4. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարի տեղակալ Վ. Սիմոնյանին:

ՎԱՀԱՆ ՔԵՐՈԲՅԱՆ

Recoverable Signature

X

ՎԱՀԱՆ ՔԵՐՈԲՅԱՆ

Signed by: KEROBYAN VAHAN 1110760124

Հավելված
ՀՀ էկոնոմիկայի նախարարի 2021 թվականի մարտի 24
N222-Ա հրամանի

ՑԱՆԿ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ (ՀՀ) ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԵՐԻ

1" Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի դեկտեմբերի 3-ի «Ամբարձիչ աշտարակների (վերհանների) կառուցվածքի և անվտանգ շահագործման տեխնիկական կանոնակարգը հաստատելու մասին» N 1449-Ն որոշում (միայն ԵԱՏՄ արտաքին տնտեսական գործունեության միասնական ապրանքային անվանացանկի «8426» ծածկագրի ներքո ներառված և ԵԱՏՄ տեխնիկական կանոնակարգման օբյեկտ չհանդիսացող արտադրանք),

2. Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի սեպտեմբերի 25-ի «Շոգու՝ մինչև 0,07ՄՊա ճնշման շոգեկաթսաների, ջրի՝ մինչև 388Կ ջերմաստիճանի ջրատաքացուցիչ կաթսաների և կաթսայական տեղակայանքների սարքվածքի ու անվտանգ շահագործման կանոններ» տեխնիկական կանոնակարգը հաստատելու մասին» N1083-Ն որոշում (միայն ԵԱՏՄ արտաքին տնտեսական գործունեության միասնական ապրանքային անվանացանկի «7309», «7310», «7311», «7305» և «7306» ծածկագրերի ներքո ներառված և ԵԱՏՄ տեխնիկական կանոնակարգման օբյեկտ չհանդիսացող արտադրանք),

3. Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի դեկտեմբերի 3-ի «Շարժասանդուղքների կառուցվածքի և անվտանգ շահագործման տեխնիկական կանոնակարգը հաստատելու մասին» N478-Ն որոշում (միայն ԵԱՏՄ արտաքին տնտեսական գործունեության միասնական ապրանքային անվանացանկի «8428» ծածկագրի ներքո ներառված և ԵԱՏՄ տեխնիկական կանոնակարգման օբյեկտ չհանդիսացող արտադրանք),

4. Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի սեպտեմբերի 25-ի «Ճոպանուղիների շահագործման տեխնիկական կանոնակարգը հաստատելու մասին» N1160-Ն որոշում (միայն ԵԱՏՄ արտաքին տնտեսական գործունեության միասնական

ապրանքային անվանացանկի «8428» և «7312» ծածկագրերի ներքո ներառված և ԵԱՏՄ տեխնիկական կանոնակարգման օբյեկտ չհանդիսացող արտադրանք),

ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ (ԵԱՏՄ) ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԵՐԻ

1" Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի հոկտեմբերի 18-ի N 823 որոշմամբ հաստատված «Մեքենաների և սարքավորումների անվտանգության մասին» տեխնիկական կանոնակարգ (ՄՄ ՏԿ 010/2011),

2" Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի հոկտեմբերի 18-ի N 824 որոշմամբ հաստատված «Վերելակների անվտանգություն» տեխնիկական կանոնակարգ (ՄՄ ՏԿ 011/2011)

3" Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի 2013 թվականի հուլիսի 2-ի N41 որոշմամբ հաստատված «Հավելյալ ճնշման տակ աշխատող սարքավորումների անվտանգության մասին» տեխնիկական կանոնակարգ (ՄՄ ՏԿ 032/2013),

4" Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի 2016 թվականի հոկտեմբերի 16-ի N 114 որոշմամբ հաստատված «Ատրակցիոնների անվտանգության մասին» տեխնիկական կանոնակարգ (ԵԱՏՄ ՏԿ 038/2016).